

Ոմանք ալ *հեղինակին միւս գործերն* ըսելով՝ հրատարակուելիք գիրքերու անուններ կը շարեն: Ասիկայ պարզապէս ինքզինքը հայր անուանել է այն զաւակներուն, զորս ապագային մէջ ունենալ կը կարծէ կամ կը փափաքի ոք:

Ալ ասկից կարող էք գուշակել, թէ ո՛րչափ փառամոլ գրիչներ ունինք:

Գիրք հրատարակելն տեսակ մը մոլութիւն դարձած է Կ. Պօլսոյ մէջ: Մին իւր բարեկամին նամակ մը կը գրէ, եւ հետեւեալ օրը զայն առանձին տետրակով մը կը հրատարակէ: Ուրիշ մը տան մը մէջ նիւթի մը վրայ քիչ մը շատախօսութիւն ըրած է, հետեւեալ օրը մասնաւոր տետրակով մը ի լոյս կ'ընծայէ իւր խօսքերը, ծանուցանելով միանգամայն, թէ բարեկամներն աղաչած են զինքն, որ տպէ ու հրատարակէ իւր շատախօսութիւնը: Եթէ այս մոլութիւնն այսպէս շարունակուի՝ քիչ ատենէն Պօլսոյ հայ երիտասարդներն տետրակներով պիտի խօսին իրարու հետ, որով թէ՛ առատ հեղինակներ ունեցած պիտի ըլլանք եւ թէ տպարանի պետերը ստակ պիտի վաստակին:

19 Սեպտեմբեր

Անգղիոյ ազգ. երեսփոխանական ժողովոյն անդամ պ. Ճէյմս Պրայս այսօր մեր ազգային ժողովոյն ներկայ գտնուեցաւ: Ատեանն վերնալէն ետքը երեսփոխաններն Ղալաթիոյ եկեղեցւոյն թանգարանին մէջ ընդունելութիւն ըրին յիշեալ ազատական երեսփոխանին, որ յայտնեց, թէ ազատականներն ամեն ճիգ պիտի թափեն Հայաստանի խնդրոյն լուծմանը համար. թէ հայերը մեծ բաներ պահանջելու չեն եւ շատանալու են Լիբանանու կամ Արեւելեան Ռումելիի վարչութեան նման վարչութեամբ մը, որ իրենց պիտի տրուի:

Ազատական երեսփոխանի մը այսպիսի յուսադրիչ խօսքերէն երեսփոխանները ուրախութեամբ լցուելով՝ մեկնեցան:

Եւ սակայն Բ. Դուռն մինչեւ այսօր *այբ* չըսաւ....:

20 Սեպտեմբեր

Տէրութեան շահերուն վնասակար լուրեր տոտող լրագիրներն պիտի խափանուին:

Այս է տպագրական տեսչութեան նոր պատուերը:

Տպագրական տեսչութեան այս պատուերը տէրութեան շահերուն վնասակար չէ՞....: